# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 14

18 ապրիլի 2015 թվականի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի առաջին մասի և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյանի հաղորդումը՝ համաձայն N 1, N 2, N 3 հավելվածների:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ք. Մարալիկ
18 ապրիլի 2015 թվական

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի ԹԻՎ 14 ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ

հազար դրամ

| N | Անվանումը | Հաշվարկային /տարեկան/ | Հաշվարկային /եռամսյակ/ | փաստացի | % | Ստուգման արդյունքում, կատ. մարմին | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հարկային եկամուտներ /տող 1.1+տող 1.2/ | 24377.3 | 2500.0 | 4115.1 | 164.6 | | |
| 1.1 | Հողի հարկ | 9814.4 | 900.0 | 721.6 | 80.2 | | |
| 1.2 | Գույքահարկ | 14562.9 | 1600.0 | 3393.5 | 212.1 | | |
| 2 | Տուրքեր /տող 2.1+տող 2.2/ | 6066.9 | 1766.5 | 1600.2 | 90.6 | | |
| 2.1 | Պետական տուրք | 3000.0 | 1000.0 | 827.9 | 82.8 | | |
| 2.2 | Տեղական տուրք | 3066.9 | 766.5 | 772.3 | 100.8 | | |
| 3 | Ոչ հարկային եկամուտներ /տող 3.1+տող 3.2+ տող 3.3+տող 3.4 + տող 3.5/ | 12260.9 | 1470.2 | 1271.6 | 86.5 | | |
| 3.1 | Համայնքի սեփականություն համարվող պահուստային հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարներ | 1250.0 | 150.0 | 86.3 | 57.5 | | |
| 3.2 | Վարչական իրավախախտումների համար կիրառված պատժամիջոցներից եկամուտներ | 50.0 | - | - | - | | |
| 3.3 | ՏԻՄ-երի և ենթակա բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից եկամուտներ | 2640.9 | 920.2 | 252.0 | 27.4 | | |
| 3.4 | Տեղական վճարներ | 200.0 | - | - | - | | |
| 3.5 | Այլ ոչ հարկային եկամուտներ | 8120.0 | 400.0 | 933.3 | 233.3 | | |
| 4 | Կապիտալ գործառնություններից եկամուտների համայնքային սեփականության /ներառյալ հողերի/ օտարումից ստացվող միջոցներ /տող 4.1+ տող 4.2/ | | | | | | |
| 4.1 | Հողի օտարումից մուտքեր | | | | | | |
| 4.2 | Հիմնական միջոցների օտարումից մուտքեր | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Ընդամենը սեփական եկամուտներ /տող 1+տող 2+տող 3+տող 4+տող 5/ | 42705.1 | 5736.7 | 6986.9 | 121.8 | | |
| 6 | Պաշտոնական տրանսֆերտների ձևով ստացվող եկամուտներ /տող 5.1+ տող 5.2+ տող 5.3/ | 99671.2 | 23314.6 | 20914.6 | 89.7 | | |
| 6.1 | Դոտացիա | 83658.2 | 20914.6 | 20914.6 | 100.0 | | |
| 6.2 | Այլ դոտացիաներ | 16013.0 | 2400.0 | - | - | | |
| 6.3 | Սուբվենցիաներ | | | | | | |
| 7 | Համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ | | | | | | |
| 8 | ՏԻՄ-երին պատվիրված լիազորությունների իրականացման համար հատկացված միջոցներ | 5342.9 | 1068.6 | - | - | | |
| Ընդամենը եկամուտներ /տող 5+ տող 6+ տող 7+ տող 8/ | | 147719.2 | 30119.9 | 27901.5 | 92.6 | | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի ԹԻՎ 14 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| N | Անվանումը | 2013թ. փաստացի | 2014թ. փաստացի | 2015 փաստացի | 2014թ. 2013թ.նկատմամբ % | 2015թ. 2014թ.նկատմամբ % |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հարկային եկամուտներ /տող 1.1+տող 1.2/ | 4630.6 | 4799.8 | 4115.1 | 103.7 | 85.7 |
| 1.1 | Հողի հարկ | 1510.4 | 1923.9 | 721.6 | 127.4 | 37.5 |
| 1.2 | Գույքահարկ | 3120.2 | 2875.9 | 3393.5 | 92.2 | 118.0 |
| 2 | Տուրքեր /տող 2.1+տող 2.2/ | 1827.5 | 1487.0 | 1600.2 | 81.4 | 107.6 |
| 2.1 | Պետական տուրք | 635.0 | 701.5 | 827.9 | 110.5 | 118.0 |
| 2.2 | Տեղական տուրք | 1192.5 | 785.5 | 772.3 | 65.9 | 98.3 |
| 3 | Ոչ հարկային եկամուտներ /տող 3.1+տող 3.2+ տող 3.3+տող 3.4 + տող 3.5/ | 1877.6 | 1661.2 | 1271.6 | 88.5 | 76.5 |
| 3.1 | Համայնքի սեփականություն համարվող պահուստային հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարներ | 301.1 | 117.9 | 86.3 | 39.2 | 73.2 |
| 3.2 | Վարչական իրավախախտումների համար կիրառված պատժամիջոցներից եկամուտներ | - | - | - | - | - |
| 3.3 | ՏԻՄ-երի և ենթակա բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից եկամուտներ | 729.8 | 688.6 | 252.0 | 94.4 | 36.6 |
| 3.4 | Տեղական վճարներ | 61.6 | 20.0 | - | 32.5 | - |
| 3.5 | Այլ ոչ հարկային եկամուտներ | 785.1 | 834.7 | 933.3 | 106.3 | 111.8 |
| 4 | Կապիտալ գործառնություններից եկամուտների համայնքային սեփականության /ներառյալ հողերի/ օտարումից ստացվող միջոցներ /տող 4.1+ տող 4.2/ | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4.1 | Հողի օտարումից մուտքեր | | | | | |
| 4.2 | Հիմնական միջոցների օտարումից մուտքեր | | | | | |
| 5 | Ընդամենը սեփական եկամուտներ /տող 1+տող 2+տող 3+տող 4+տող 5/ | 8335.7 | 7948.0 | 6986.9 | 95.3 | 87.9 |
| 6 | Պաշտոնական տրանսֆերտների ձևով ստացվող եկամուտներ /տող 5.1+ տող 5.2+ տող 5.3/ | 22656.7 | 23129.1 | 20914.6 | 102.1 | 90.4 |
| 6.1 | Դոտացիա | 18856.7 | 18206.1 | 20914.6 | 96.5 | 114.9 |
| 6.2 | Այլ դոտացիաներ | - | 4923.0 | - | - | - |
| 6.3 | Սուբվենցիաներ | 3800.0 | - | - | - | - |
| 7 | Համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ | 260.4 | 0.4 | 1999.2 | 0.15 | 499800 |
| 8 | ՏԻՄ-երին պատվիրված լիազորությունների իրականացման համար հատկացված միջոցներ | 530.9 | - | - | - | - |
| Ընդամենը եկամուտներ /տող 5+ տող 6+ տող 7+ տող 8/ | | 31523.3 | 31077.1 | 27901.5 | 98.6 | 89.8 |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի ԹԻՎ 14 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ԸՍՏ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| N | Անվանումը | Պլան | Փաստացի | % |
|---|---|---|---|---|
| 1 | Օրենսդիր և գործադիր մարմինների պետ. կառավարում | 7510.0 | 7408.4 | 98.6 |
| 2 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 1188.6 | 89.9 | 7.6 |
| 3 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 330.0 | 206.0 | 62.4 |
| 4 | Տնտեսական հարաբերություններ | 4567.8 | 1795.7 | 39.3 |
| 5 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | 4606.1 | 4195.0 | 91.1 |
| 6 | Բնակարանային շին. | 4099.2 | 2250.0 | 54.9 |
| 7 | Առողջապահություն | - | - | - |
| 8 | Հանգիստ, մշակույթ և կրոն | 2643.0 | 2341.8 | 88.6 |
| 9 | Կրթություն | 4825.0 | 3686.9 | 76.4 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10 | Սոցիալական պաշտպանություն | 850.0 | 550.0 | 64.7 |
| 11 | Պահուստային ֆոնդ | 1499.4 | - | - |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 32119.1 | 22523.7 | 70.1 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 15

18 ապրիլի 2015 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՂ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԾՆՈՂԱԿԱՆ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԶԵՂՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնքային ենթակայության երաժշտական դպրոցի տնօրենի դիմումը, նկատի ունենալով երաժշտական դպրոց հաճախող երեխաների սոցիալական վիճակը և ելնելով մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության զարգացման շահերից, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 5-րդ և 19-րդ կետերի դրույթներով

<u>**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**</u>

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնքային ենթակայության երաժշտական դպրոց հաճախող 2015 թվականի ծնողական մուծումներից ազատվող և զեղչվող երեխաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ք. Մարալիկ
18 ապրիլի 2015 թվական

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի ԹԻՎ 15 ՈՐՈՇՄԱՆ

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՂ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻՑ ԱԶԱՏՎՈՂ ԵՎ ԶԵՂՉՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ

| Հ/Հ | Անուն, ազգանուն | Սոցիալական վիճակը | |
|---|---|---|---|
| 1. | Գյուլբեկյան Քնարիկ Արեստակի | սոց. անապահով | 100 % |
| 2. | Սիմոնյան Լիաննա | սոց. անապահով | 50 % |
| 3. | Հայրապետյան Հասմիկ Հաբեթի | սոց. անապահով | 100 % |
| 4. | Պետրոսյան Տաթև Վահրամի | սոց. անապահով | 100 % |
| 5. | Գրիգորյան Լիա Արթուրի | սոց. անապահով | 100 % |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ** N 16
18 ապրիլի 2015 թվականի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹԻՎ 2 ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ 1-ԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻՑ 48.06 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՑ , 5 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի նկատի ունենալով , որ <<Փյունիկ>> բարեգործական հիմնադրամի միջոցներով կատարվելու է Մարալիկի քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող թիվ 2 վարչական շենքի 1-ին հարկի հարավային հատվածից 48.06 քառակուսի մետր մակերեսով 2 սենյակների՝ N 8, N9 վերանորոգման աշխատանքներ, ուստի ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով

<u>*Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է*</u>

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող թիվ 2 վարչական շենքի 1-ին հարկի հարավային հատվածից 48.06 քառակուսի մետր մակերեսով 2 սենյակները՝ N 8, N 9, անհատույց օգտագործման իրավունքով հինգ տարի ժամանակով տրամադրել <<Փյունիկ>> բարեգործական հիմնադրամին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲՈՒԼՂՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

2. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՍ

3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

4. ՄԱԿԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ

5. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

6. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 17

18 ապրիլի 2015 թվականի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի կենտրոնական հրապարակում Մեծ Եղեռնի 100-ամյակի տարելիցի նախաշեմին սեփական նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ Սողոմոն Թեհլերյանի արձանը տեղադրելու, քաղաքի սպորտային և մշակութային կյանքի զարգացման գործում ներդրած մեծ ավանդի, Մարալիկի ազգաբնակչության նկատմամբ կատարած ծառայությունների համար Յուրա Հովհաննիսյանին շնորհել <<Մարալիկ քաղաքի պատվավոր քաղաքացու>> կոչում:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲՈՒԼՈՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

2. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՍ

3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

4. ՄԱԿԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ

5. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

6. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ 18

« 18 » ապրիլի 2015 թվական          քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 64-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքային համայնքի սեփականության 2014 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին>> թիվ 64-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

2. Որոշման հավելվածում ավելացնել նոր՝ 133 տողը հետևյալ խմբագրությամբ՝

| N | Գույքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Գույքի տեխնիկական վիճակը |
|---|---|---|---|---|
| 133. | Սողոմոն Թեհլերյանի արձան | հատ | 1 | Գտնվում է տեխնիկապես սարքին վիճակում |

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ք. Մարալիկ
18 ապրիլի 2015 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 19-Ն

18 ապրիլի 2015թվականի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնքի վարչական բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 6, դաս 1 (ընդհանուր բնույթիա հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից <<60.0>> հազ. դրամ դրամաշնորհային գումար հատկացնել Հայաստանի Կոմունիստական Կուսակցությանը:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է

ք. Մարալիկ
18 ապրիլի 2015 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ** N 20-Ն
18 ապրիլի 2015 թվականի

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 62-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի , 33-րդ հոդվածի 4-րդ մասի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2015 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 62-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածի <<6469.5>> թիվը փոխարինել <<6169.5>> թվով:
2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 04, խումբ 5, դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածի <<300.0>> թիվը փոխարինել <<600.0>> թվով:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ք. Մարալիկ
18 ապրիլի 2015 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 21

18 ապրիլի 2015 թվականի

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 56 հոդվածի 5-րդ, 8-րդ մասերով, 67-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է</u>

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքի բնակելի կառուցապատման գոտում Հր. Շահինյան փողոցի N 200/3 հասցեում գտնվող հողատարածքում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով (կադաստրային ծածկագիր 008-003-0022-0061) 400 քառակուսի մետր հողատարածքը օտարել աճուրդային եղանակով:

2. Հողատարածքի մեկնարկային գին հաստատել հողի կադաստրային արժեքի 60 %-ի չափով՝ 126720 ( մեկ հարյուր քսանվեց հազար յոթ հարյուր քսան) դրամ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է

ք. Մարալիկ
18 ապրիլի 2015 թվական